

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է և հրապարակվում է մրցույթի հանձնաժողովի 2019 թվականի ապրիլի 3-ի որոշման համաձայն
Մրցույթի ծածկագիրը՝ ԴՄ-ԳՀ-ԱՆ-ՁԻԱՀ-19/1

Դրամաշնորհատուն՝ «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ը, որը գտնվում է ք.Երևան, Աճառյան 2 հասցեում, հայտարարում է մրցույթ:

Մրցույթում ընտրված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել դրամաշնորհի տրամադրման պայմանագիր (այսուհետև՝ պայմանագիր):

Ցանկացած կազմակերպություն, որը կհամապատասխանի հրավերով սահմանված պայմաններին, ունի սույն մրցույթին մասնակցելու հավասար իրավունք:

Մրցույթին մասնակցելու իրավունք չունեցող անձանց, ինչպես նաև մասնակիցներին ներկայացվող որակավորման չափանիշներն ու այդ չափանիշների գնահատման համար ներկայացվելիք փաստաթղթերը սահմանված են սույն մրցույթի հրավերով:

Ընտրված մասնակիցը որոշվում է հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ առավելագույն միավոր հավաքած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Մրցույթի հրավերը թղթային կամ էլեկտրոնային ստանալու համար անհրաժեշտ է **գրավոր պահանջ ներկայացնել Դրամաշնորհատուին** մինչև ս.թ. մայիսի 1-ը: Հանձնաժողովի քարտուղարը մրցույթի հրավերը տրամադրում է գրավոր պահանջ ներկայացրած կազմակերպությանը՝ նման պահանջ ստանալու օրվան հաջորդող **երկու աշխատանքային օրվա ընթացքում**:

Մրցույթի հրավեր չստանալը չի կարող հիմք հանդիսանալ մասնակցի հայտը չընդունելու համար:

Մրցույթի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ, ք.Երևան, Աճառյան 2, N 209 սենյակ հասցեով, փաստաթղթային ձևով մինչև **2019թ. մայիսի 6-ի ժամը 11:00-ն**: Հայտերը պետք է ներկայացվեն հայերեն: Հայտարարության և հրավերի տեքստերը տեղադրված են armaids.am, moh.am, ccmarmenia.am կայքերում:

Հայտերի բացումը տեղի կունենա «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ, ք.Երևան, Աճառյան 2 հասցեում՝ N 209 սենյակում, **2019թ. մայիսի 6-ին ժամը 11:00-ին**:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել մրցույթի հանձնաժողովի քարտուղար՝ Սոֆիա Գրիգորյանին:

Հեռախոս [010610730](tel:010610730)

Էլ. փոստ accountancy@armaids.am

Դրամաշնորհատու՝ «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ